

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----„ ----- 2016 թ.

„-----„ ----- 2016 թ.

(արձանագրություն №)

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Սույն կանոնակարգը սահմանում է <<Հայաստանի ազգային ագրարային համալսարան>> հիմնադրամի (այսուհետ՝ ՀԱԱՀ) ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդների առաջադրման, ընտրությունների անցկացման, նրա հետ աշխատանքային պայմանագրի կնքման կարգը:
- 1.2. ՀԱԱՀ ռեկտորի ընտրությունների կանոնակարգը ՀԱԱՀ կանոնադրության 29-րդ կետի «8»-րդ ենթակետով տրված լիազորությունների շրջանակներում հաստատում է ՀԱԱՀ հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ):
- 1.3. ՀԱԱՀ ռեկտորի ընտրությունների կազմակերպման ծախսերը կատարվում են ՀԱԱՀ միջոցների հաշվին:

2. ՀԱԱՀ ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

- 2.1. ՀԱԱՀ-ում ռեկտորի թափուր պաշտոնի համար լիազորված պետական մարմինը և ՀԱԱՀ հոգաբարձուների խորհուրդը հայտարարում են բաց մրցույթ: Սույն կանոնակարգի 2.2 կետով նախատեսված մրցույթը կազմակերպվում է գործող ռեկտորի պաշտոնավարման ժամկետը լրանալուց երկու ամիս առաջ:
- 2.2. Մրցույթի անցկացումից ոչ ուշ քան 40 օր առաջ <<Հայաստանի Հանրապետություն>>, <<Республика Армения>>, <<Կրթություն>>, <<Առավոտ>> և <<Ազգ>> թերթերում, հրապարակվում է հայտարարություն, որում զետեղվում է սույն կանոնակարգի <<2.3>>

կետով սահմանված տեղեկատվությունը: Հրապարակումը պետք է կրկնվի առաջին հրապարակումից հետո՝ 5-օրյա ժամկետում: Հրապարակումները կազմակերպում է ՀԱԱՀ հոգաբարձուների նախագահը (այսուհետ՝ խորհրդի նախագահ):

2.3. Հայտարարության տեքստում պարտադիր կարգով նշվում է.

ա) մրցույթին մասնակցելու համար դիմումների ընդունման վայրը և ժամկետը,

բ) մրցույթի անցկացման վայրը, օրը և ժամը,

գ) մրցույթին մասնակցելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստափղթերի ցանկը սույն կանոնակարգի <<2.4>> կետին համապատասխան

դ) հավակնորդին ներկայացվող պահանջները՝ սույն կանոնակարգի <<3.2>> կետին համապատասխան:

2.4 Մրցույթին մասնակցելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը

ա) ինքնաառաջադրման դեպքում՝ դիմում, իսկ ՀԱԱՀ գիտխորհրդի կամ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ կառուցվածքային ստորաբաժանման առաջադրելու մասին որոշումը և առաջադրվելու հավակնորդի գրավոր համաձայնությունը,

բ) լուսանկար,

գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,

դ) ինքնակենսագրություն,

ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն, դոկտորի գիտական աստիճանը և պրոֆեսորի գիտական կոչումը հավաստող վկայականների պատճեններ,

զ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

է) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,

ը) հրատարակված գիտական աշխատանքների ցուցակը,

թ) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե այն գործում է),

ժ) հավակնորդի գործունեության ծրագրի՝ փակ և կնքված փաթեփով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո:

Սույն կետի «դ», «ը» և «ժ» ենթակետերով նախատեսված տեղեկատվությունը ներկայացվում է նաև էլեկտրոնային տեսքով՝ «Microsoft Office, Word» ծրագրին համապատասխանող ձևաչափով:

- 2.5 ՀԱԱՀ ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի հանձնումն ավարտվում է մրցույթի անցկացումից 10 օր առաջ:
- 2.6 ՀԱԱՀ ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը (համարակալած և յուրաքանչյուր էջի հետնամասում ստորագրած) հանձնվում է ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղարին (այսուհետև՝ խորհրդի քարտուղար)՝ առձեռն կամ փոստով:
- 2.7 Հավակնորդների՝ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերը ընդունելու նպատակով ՀԱԱՀ-ում բացվում է գործերի ընդունման գրանցամատյան՝ էջերի համարակալումով, կարված և կնքված:
- 2.8 Գրանցամատյանի լրացված էջը կնքվում և փակվում է յուրաքանչյուր օրվա ավարտին:
- 2.9 Փոստային առաքման միջոցով ուղարկված փաստաթղթերը համարվում են ժամկետում տրված, եթե ստացվել են մինչև փաստաթղթերի ընդունման համար սահմանված ժամկետի լրանալը: Փաստաթղթերի փոստային առաքման դեպքում փաստաթղթերն ընդունող մարմինը դրանց ստացման մասին գրավոր ծանուցում է հավակնորդին:
- 2.10. Փաստաթղթերի առձեռն հանձնման դեպքում խորհրդի քարտուղարը կատարում է հանձնումը հավաստող նշագրում՝ հավակնորդի փաստաթղթերի օրինակի վրա:
- 2.11 Հայտերը ընդունելիս խորհրդի քարտուղարը պարտավոր է ստուգել հայտի համապատասխանությունը սույն կանոնակարգի «2.4» կետի պահանջներին: Փաստաթղթերի թերի լինելու դեպքում հավակնորդը տեղեկացվում է այդ մասին նույն պահին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ 1 օրվա ընթացքում, պատվիրված նամակով՝ հանձնման մասին հետադարձ ծանուցմամբ, հնարավորության դեպքում՝ նաև հեռախոսազանգով: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում: Հայտերի ընդունումն ավարտելու հաջորդ օրը խորհրդի քարտուղարը կից գրությամբ ընդունված փաստաթղթերի փաթեթը հանձնում է Խորհրդի նախագահին:

Խորհրդի նախագահը մրցույթի անցկացումից առնվազն 1 շաբաթ առաջ.

ա) խորհրդի անդամներին է ուղարկում յուրաքանչյուր հավակնորդի ներկայացրած փաստաթղթերի պատճենները,

բ) կազմակերպում է հավակնորդների ազգանվան, գիտական աստիճանի և կոչման, զբաղեցրած պաշտոնի, ինչպես նաև առաջադրման եղանակի վերաբերյալ տեղեկատվության տարածում ՀԱԱՀ «Հասկ» թերթում, ինտերնետային կայքում, ֆակուլտետների հայտարարությունների տախտակներին և այլն,

գ) ապահովում է փաստաթղթերի պատճենների առկայությունը ՀԱԱՀ գրադարանում,

դ) Հաշվի առնելով խորհրդի որոշ անդամների հնարավոր հարգելի բացակայությունը անկողնային հիվանդության կամ երկարատև գործուղման մեջ գտնվելու պատճառով, մրցույթի անցկացումից մեկ օր առաջ ճշտում է մրցութային նիստին մասնակցող խորհրդի անդամների թվաքանակը, կազմում ու հաստատում է համապատասխան ցուցակ, որն էլ համարվում է որպես սույն կանոնակարգի 5.18, 5.19, 5.20 և 5.22 կետերով նախատեսված ցուցակային կազմ: Այն չի կարող պակաս լինել սույն կանոնակարգի 4.3 կետով նախատեսված ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի անդամների թվաքանակի առնվազն 2/3-ից:

3. ՀԱԱՀ ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

3.1 ՀԱԱՀ ռեկտորի թափուր պաշտոնի թեկնածուները առաջադրվում են ՀԱԱՀ գիտական խորհրդի, ֆակուլտետների գիտական խորհուրդների և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կամ ինքնաառաջադրմամբ:

3.2 ՀԱԱՀ ռեկտորի թեկնածու կարող է առաջադրվել և ընտրվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի գիտությունների դոկտորի աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում:

Ռեկտորն ընտրվում է բաց մրցույթի կարգով՝ հոգաբարձուների խորհրդում, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով:

4. ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱԱՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

4.1 Ռեկտորի ընտրության խորհրդի նիստը նախապատրաստվում և ղեկավարում է խորհրդի նախագահը: ՀԱԱՀ ռեկտորի ընտրության նիստը դոնփակ է (բացառություն է արվում ռեկտորի պաշտոնի խորհրդի անդամ չհանդիսացող հավակնորդների համար):

4.2 Նիստի օրակարգը ներառում է հետևյալ հարցերը.

- ա) հավակնորդների՝ սույն կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում,
- բ) թեկնածուների ծրագրերի ներկայացում,
- գ) հավակնորդներին հարցերի ներկայացում և խորհրդի անդամների ելույթներ,
- դ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորում,
- ե) ռեկտորի ընտրելու նպատակով գաղտնի քվեարկություն,
- զ) ռեկտորի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

4.3 Խորհրդի մրցութային նիստը համարվում է իրավագոր, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:

4.4 Բացառությամբ սույն ընթացակարգի «4.6» և «5.18» կետերով նախատեսված որոշումների, նիստում խորհրդի մյուս որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.5 Խորհրդի նիստին ռեկտորի պաշտոնի հավակնորդի ներկայությունը պարտադիր է, սակայն նրա բացակայությունը հիմք չէ նրա թեկնածությունը քննարկումից կամ քվեարկությունից հանելու համար՝ բացառությամբ գրավոր ինքնաբացարկ հայտնելու դեպքերի:

4.6 Օրակարգի առաջին հարցով խորհրդի քարտուղարը զեկուցում է ռեկտորի թեկնածուների սույն կանոնակարգի պահանջներին բավարարելու հարցը: Հարցի ներկայացումից հետո զեկուցողը պատասխանում է առաջացած հարցերին: Խորհրդի ցանկացած անդամ կարող է առաջարկ ներկայացնել անձին թեկնածուների ցուցակից հանելու վերաբերյալ՝ հիմնավորելով թե սույն կանոնակարգի որ պահանջներն են խախտված: Հավակնորդին ցուցակից հանելու առաջարկը խորհրդի նախագահի կողմից դրվում է քվեարկության: Հավակնորդը հանվում է ցուցակից, եթե առաջարկին կողմ է քվեարկել նիստին ներկա անդամների առնվազն երկու երրորդը:

4.7 Օրակարգի երկրորդ հարցով խորհրդի նախագահը ծրագրային ելույթների համար, ըստ ազգանունների այբբենական կարգի, ձայնը տալիս է հավակնորդներին: Յուրաքանչյուր հավակնորդ ունի ոչ ավելի քան 10 րոպե տևողությամբ ելույթի իրավունք: Յուրաքանչյուր հավակնորդի ելույթից հետո խորհրդի նախագահը հայտարարում է հարցերի 1-ին հերթագրում, որից հետո խորհրդի գրանցված անդամները, ըստ հերթականության, ստանում են թեկնածուի հարց տալու հնարավորություն: Հարցն ու պատասխանը պետք է ձևակերպել հստակ: Թեկնածուին տրվող հարցերը կարող են

վերբերել միայն նրա կողմից ներկայացված փաստաթղթերին կամ ծրագրային ելույթին:
Հարցերն ու պատասխանները արձանագրվում են խորհրդի քարտուղարի կողմից:

4.8 Առաջին հերթագրման արդյունքում տրված հարցերին թեկնածուի պատասխանելուց հետո խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, հայտարարում է հարցերի 2-րդ հերթագրում՝ սույն կանոնակարգի «4.7» կետով նախատեսված կարգով:

4.9 Բոլոր թեկնածուներին ուղղված հարցերի և նրանց պատասխանների ավարտից հետո սկսվում է քննարկում: Խորհրդի անդամների ելույթները կարող են դադարեցվել խորհրդի որոշմամբ: Ելույթ ունեցողներին հարցեր չեն տրվում:

4.10 Խորհրդի նիստերը ընդմիջվում են խորհրդի որոշմամբ:

4.11 Եթե գաղտնի քվեարկությունը չի սկսվել ժամը 19⁰⁰-ին, նիստն ընդմիջվում է մինչև հաջորդ օրը՝ ժամը 9⁰⁰-ն՝ անկախ նրանից, հաջորդ օրն աշխատանքային է, թե ոչ: Եթե գաղտնի քվեարկությունը սկսվել է, ապա նիստը շարունակվում է մինչև քվեարկության ավարտը և ընտրության արդյունքների մասին որոշման կայացումը:

5. ՀԱԱՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԱԿՑՈՒՄԸ

5.1. Նիստում քննարկումից հետո խորհրդի նախագահը, ըստ ազգանունների այբբենական կարգի, հրապարակում է հավակնորդների ազգանուն անունները: Եթե վերջիններս իրենց անունը հրապարակելու պահին ինքնաբացարկ չեն հայտնում, ապա նրանց թեկնածությունը ներառվում է քվեաթերթիկում:

5.2. Խորհրդի նախագահը ներկայացնում է գաղտնի քվեարկության կարգը:

5.3. Խորհուրդն իր կազմից ընտրում է 5 անդամներից բաղկացած հաշվիչ հանձնաժողով:

5.4. Հանձնաժողովը՝

ա) իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ և քարտուղար: Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ,

բ) կազմակերպում և անցկացնում է քվեարկությունը,

գ) հրապարակում է ՀԱԱՀ ռեկտորի ընտրության քվեարկության արդյունքները:

5.5. Խորհուրդն իր կազմից առաջադրում է հաշվիչ հանձնաժողովի անդամների թեկնածուներին: Յուրաքանչյուր անդամի առաջադրումից հետո կազմակերպվում է քվեարկություն: Առաջադրումներն ու քվեարկությունները շարունակվում են մինչև հանձնաժողովի կազմի համլրումը:

- 5.6. Ռեկտորի ընտրությունների քվեաթերթիկները ստորագրվում են հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:
- 5.7. Ռեկտորի ընտրությունների քվեաթերթիկում թեկնածուների ազգանունները նշվում են այբբենական կարգով: Յուրաքանչյուր թեկնածուի ազգանվան դիմաց առկա է «կողմ եմ» գրառումով վանդակը: Քվեաթերթիկը պետք է պարունակի նաև «բոլորին դեմ եմ» գրառումով վանդակ: Մեկ թեկնածուի դեպքում նրա ազգանվան դիմաց առկա են «կողմ եմ» և «դեմ եմ» գրառումներով վանդակներ:
- 5.8. Խորհրդի անդամը հաշվիչ հանձնաժողովից քվեաթերթիկ ստանալիս ցուցակում ստորագրում է իր ազգանվան դիմաց:
- 5.9. Խորհրդի անդամը քվեարկության ժամանակ ունի միայն մեկ ձայնի իրավունք: Քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:
- 5.10. Ընտրող քվեաթերթիկում համապատասխան նշում է կատարում իր նախընտրած թեկնածուի ազգանվան դիմաց՝ „կողմ“ գրառմամբ վանդակում դնելով <<V>> նշանը: Եթե նա դեմ է բոլոր թեկնածուներին, ապա նշում է կատարում <<բոլորին դեմ եմ>> գրառմամբ վանդակում: Մեկ թեկնածուի դեպքում ընտրողը նշվում է կատարում <<կողմ եմ>> կամ <<դեմ եմ>> գրառումներով վանդակներից միայն մեկում:
- 5.11. Քվեարկությունն ավարտելուց հետո հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, քվեատուփից հանում է մեկական քվեաթերթիկ, հայտարարում է քվեարկության արդյունքը և փոխանցում է հանձնաժողովի անդամներին տեսակավորելու համար: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ մինչև քվեատուփից հաջորդ քվեաթերթիկը հանելը կարող է պահանջել քվեարկության դնելու քվեաթերթիկի անվավեր լինելու հարցը:
- 5.12. Քվեաթերթիկը համարվում է անվավեր, եթե չի համապատասխանում սույն կանոնակարգի 5.7 և 5.10 կետերի պահանջներին, կամ պարունակում է ընտրողի ինքնությունը բացահայտող նշում կամ սույն կանոնակարգի պահանջներին հակասող ցանկացած այլ խախտում:
- 5.13. Հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն:

Արձանագրության մեջ գրառվում է՝

ա) քվեաթերթիկ ստացածների թիվը (ըստ ցուցակում առկա ստորագրությունների),

բ) քվեատուփում առկա քվեաթերթիկների ընդհանուր թիվը,

գ) անվավեր քվեթերթիկների թիվը,

դ) թեկնածուների (ների) ազգանունը (ները) և յուրաքանչյուր ստացած ձայները,

ե) «բոլորին դեմ» (մեկից ավելի թեկնածուների դեպքում) տրված ձայները:

5.14 Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Մեկից ավելի թեկնածուների դեպքում արձանագրության մեջ ցուցակը կազմվում է ըստ հավաքված «կողմ» ձայների քանակի նվազման հաջորդականության:

5.15 Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները խորհրդի նիստում: Քվեարկության ընթացքի կամ քվեաթերթիկների հաշվման ընթացքի վերաբերյալ հանձնաժողովի՝ առարկություն ունեցող անդամը քվեարկության արդյունքները հրապարակելուց հետո կարող է խորհրդին ներկայացնել նախօրոք գրավոր շարադրած հատուկ կարծիք: Խորհուրդը բաց քվեարկությամբ իր վերաբերմունքն է արտահայտում ներկայացված բոլոր հատուկ կարծիքների վերաբերյալ:

5.16 Քվեարկության արդյունքների հիման վրա խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) ՀԱԱՀ ռեկտոր ընտրելու մասին,

բ) քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու մասին,

գ) ընտրությունն անվավեր ճանաչելու և ռեկտոր չընտրելու մասին,

դ) ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրելու մասին:

5.17 ՀԱԱՀ ռեկտորի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքել է խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ:

5.18 Առաջին փուլի քվեարկության արդյունքում ընտրությունները համարվում են չկայացած, իսկ ռեկտորը՝ չընտրված, եթե քվեարկված միակ թեկնածուն չի ստացել ընտրվելու համար անհրաժեշտ ձայներ, կամ եթե քվեարկվել են երկու և ավելի թեկնածուներ, և նրանք միասին չեն հավաքել խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ:

5.19 Քվեարկության երկրորդ փուլ անցկացվում է այն դեպքում, եթե քվեարկվել են երկու կամ ավելի թեկնածուներ, և նրանցից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ: Այս դեպքում երկրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները, եթե նրանք միասին հավաքել են խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ, իսկ երկրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ

հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները: Եթե առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները միասին չեն հավաքել խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ, ապա երկրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երեք, իսկ երկրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այլ թեկնածուները:

5.20 Երկրորդ փուլի քվեարկության արդյունքների հիման վրա խորհուրդը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) ՀԱԱՀ ռեկտոր ընտրելու մասին,

բ) քվեարկության երրորդ փուլ անցկացնելու մասին,

գ) ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրելու մասին:

5.21 Երկրորդ փուլի քվեարկության արդյունքում ընտրությունները ճանաչվում են չկայացված, իսկ ռեկտորը համարվում է չընտրված, եթե թեկնածուները միասին չեն հավաքել խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ:

5.22 Քվեարկության երրորդ փուլը անցկացվում է այն դեպքում, եթե քվեարկության երկրորդ փուլի արդյունքում թեկնածուներից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ: Երրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները, իսկ երկրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները:

5.23 Երրորդ փուլի քվեարկության արդյունքների հիման վրա խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) ՀԱԱՀ ռեկտոր ընտրելու մասին,

բ) ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրելու մասին:

5.24 Երրորդ փուլի քվեարկության արդյունքում ընտրությունները ճանաչվում են չկայացած, իսկ ռեկտորը համարվում է չընտրված, եթե որևէ թեկնածու չի ստացել ընտրվելու համար անհրաժեշտ թվով ձայներ:

5.25 Ռեկտորի ընտրության արդյունքը ձևակերպվում է խորհրդի որոշման տեսքով: Որոշումը ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը:

5.26 Ռեկտորի ընտրության գործընթացն արտացոլող բոլոր փաստաթղթերը խորհրդի նիստի արձանագրության հետ միասին պահվում են ՀԱԱՀ-ում:

- 5.27** Ընտրությունների կանոնակարգի խախտումները և ընտրությունների արդյունքները կարող են բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 5.28** Ընտրությունները խորհրդի կողմից ճանաչվում են անվավեր, եթե ընթանում են ՀՀ օրենսդրության, ՀԱԱՀ կանոնադրության, սույն կանոնակարգի էական խախտումներով:
- 5.29** Եթե խախտումները տեղի են ունեցել մինչև խորհրդի մրցութային նիստը, ապա ընտրություններն անվավեր ճանաչելու դեպքում սահմանված կարգով հայտարարվում է նոր մրցույթ:
- 5.30** Եթե խախտումները տեղի են ունեցել խորհրդի մրցութային նիստում կամ քվեարկության փուլում, ապա ընտրություններն անվավեր ճանաչվելու դեպքում խորհուրդը հայտարարում է նոր քվեարկություն:
- 5.31** ՀԱԱՀ ռեկտոր ընտրվելու մասին որոշման մեկ օրինակը խորհրդի նախագահը կից գրությամբ ուղարկում է լիազորված պետական մարմին, իսկ ռեկտորի հետ կնքում է աշխատանքային պայմանագիրն օրենքով սահմանված ժամկետով:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հոգաբարձուների խորհրդի «-----»----- -թ. նիստում /արձանագրություն թիվ ----/

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության փակ /գաղտնի/ քվեարկության

Թեկնածուի ազգանուն, անուն

ԿՈՂՄ ԵՄ

ԴԵՄ ԵՄ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Թեկնածությանը կողմ լինելու դեպքում նշում է կատարվում «ԿՈՂՄ ԵՄ», իսկ դեմ լինելու դեպքում «ԴԵՄ ԵՄ» գրառումով վանդակում: «V» նշանով, միայն մեկ վանդակում:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հոգաբարձուների խորհրդի «-----»----- -թ. նիստում /արձանագրություն թիվ -----/

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության փակ /գաղտնի/ քվեարկության

		ԿՈՂՄ ԵՄ
1.		
2.		
3.		
4.	«Բոլորին դեմ եմ»	

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Թեկնածությանը կողմ լինելու դեպքում նշում է կատարվում «ԿՈՂՄ ԵՄ», իսկ դեմ լինելու դեպքում «ԴԵՄ ԵՄ» գրառումով վանդակում: «V» նշանով, միայն մեկ վանդակում:

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

հաշվիչ հանձնաժողովի նիստի

Հաշվիչ հանձնաժողովը ընտրվել է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի «___» _____թ. նիստում /արձանագրություն թիվ ____/հետևյալ կազմով

1. _____/նախագահ/
2. _____/քարտուղար/
3. _____
4. _____
5. _____

ՀԱԱՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 28 անդամներից ներկա էին _____ը

Քվեարկվել է ՀԱԱՀ հիմնադրամի ռեկտորի թեկնածությունը:

Քվեարկությանը մասնակցել են ՀԱԱՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի _____ անդամներ:

Բաժանվել է _____ քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է _____ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են.

Թեկնածուի ազգանուն, անուն	Կողմ	Դեմ	Անվավեր

1. Փակ/զաղտնի/ քվեարկության արդյունքներով

ա/ _____ը

ազգանուն, անուն

ընտրված է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտոր:

բ/ ՀԱԱՀ հիմնադրամի ռեկտոր չի ընտրվել և ընտրությունը ճանաչվել է անվավեր:

գ/ ՀԱԱՀ հիմնադրամի ռեկտորի ընտրությունը համարվում է չկայացած և ռեկտորը չընտրված:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____
 ստորագրություն ազգանուն, անուն

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

- | | |
|----------------------------|--------------------------|
| 1. _____
ստորագրություն | _____
ազգանուն, անուն |
| 2. _____
ստորագրություն | _____
ազգանուն, անուն |
| 3. _____
ստորագրություն | _____
ազգանուն, անուն |
| 4. _____
ստորագրություն | _____
ազգանուն, անուն |

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

հաշվիչ հանձնաժողովի նիստի

Հաշվիչ հանձնաժողովը ընտրվել է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի «_____» _____թ. նիստում /արձանագրություն թիվ _____/ հետևյալ կազմով

6. _____/նախագահ/
7. _____/քարտուղար/
8. _____
9. _____
10. _____

ՀԱԱՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 28 անդամներից ներկա էին _____ը

Քվեարկվել է ՀԱԱՀ հիմնադրամի ռեկտորի թեկնածությունը:

Քվեարկությանը մասնակցել են ՀԱԱՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի _____ անդամներ:

Բաժանվել է _____ քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է _____ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են.

	Թեկնածուի ազգանուն, անուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.				
2.				
3.				
4.				

2. Փակ/զաղտնի/ քվեարկության արդյունքներով

ա/ _____ը

ազգանուն, անուն

ընտրված է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտոր:

բ/ ՀԱԱՀ հիմնադրամի ռեկտոր չի ընտրվել և ընտրությունը ճանաչվել է անվավեր:

գ/ ՀԱԱՀ հիմնադրամի ռեկտորի ընտրությունը համարվում է չկայացած և ռեկտորը չընտրված:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____

ստորագրություն

ազգանուն, անուն

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

2. _____

ստորագրություն

ազգանուն, անուն

2. _____

ստորագրություն

ազգանուն, անուն

3. _____

ստորագրություն

ազգանուն, անուն

4. _____

ստորագրություն

ազգանուն, անուն